

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12... 300
Վեցամսեայ 6

ԱՐՏԱՍՈՂՍԱՆ

Երկու րիս մէկ ծրարով
Տարեկան 14 30


Վեցամսեայ 7

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօրար
Վեցամսեայ 1.50

ԿԱՆԻՆԻ

Ծանուցման տուր
20 տանքիս



Rev. Père G. Kalemkarian Michutaris
tengasee No. 4
Vienne

Rédaction du journal

„Ira vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравункъ

ВАРНА

Գրութիւնք եւ լին
տրութիւնք

ԼՐԱՎԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՅԱՐԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԽԶՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Ա.

(Հին Հնչակեաններ)

Նախընթաց յօդուածով, քննա-
թեան նիւթ անելով այն հարցը
թէ Հնչակեան յեղափոխական
երկու հաստատմանը, իրենց մօ-
տիկ անցեալում կայացրած Միու-
թիւնը անխորհուրդ կերպով խը-
զելուց յետոյ, ինչ վերաբերմունք
ունեցած էին դէպի նոյն այդ
գաղափարը իրենց ներկայ և
անշատ կուսակցական գործունէու-
թեան մէջ, մենք ասացինք որ
այդ նկատմամբ երկու կողմից
տեսնուած և հաստատուած իրո-
շուրթիւնը՝ ձգտումն էր դարձեալ
դէպի նոյն այդ միութիւնը. ոչ
ի հարկէ, անպատճառ դէպի
հնչակեան միութիւնը, այլ ա-
նորոշ կերպով, դէպի յեղափո-
խական միութիւնը, դէպի յեղա-
փոխական բոլոր ոյժերի ընդհա-
նուր համակեդրոնացման և հա-
մագործակցութեան Անհրաժեշ-
տութիւնը:

Բայց եթէ, խօսքը մասնաւորելով
նոր Հնչակեաններէ վերայ, մենք
կարողացանք, ամենայն համար-
ձակութեամբ և ամենայն անվե-
րապահութեամբ, եղբակա՛նք,
Միութեան գաղափարի նկատ-
մամբ, ի նպատակ այս վերջիննե-
րի, նոյնը, սակայն, չենք լա-
րող անել Հին Հնչակեանների
վերաբերմամբ, որոնց նկատմամբ
հարկադրուած ենք սեղմուելու,
չափաւորուելու, վերապահուելու,
եթէ կարելի է այսպէս ասել,
իրենք գրութիւնը այս կողմից
այնպէս կամ այնքան պարզ չէ,
ինչպէս կամ ինչքան նախորդ
դէպքում:

Հին Հնչակեանները, հաղիւ
միութիւնը տապալուած, իրենց
ձեռք առած յեղափոխական պրօ-
պագանդայով մեզ վերայ շատ
վատ, շատ աննպաստ տպաւորու-
թիւն թողուցին: Նրանք, կար-
ծես, աղետալի խզումից աւելի
ուրախ քան տխուր, միանգամից
խզած յեղափոխական անմիջական

կեանքից և առանձնացած դէմ
առ դէմ գաղափարապաշտին նեղ և
մասնաւոր գաղափարների հետ
(սօսիալիզմ), յանկարծ գտնուե-
ցան գաղափարային միջնորդողի
աւանդներին բարձունքը, ուր
Հայրենիքի ազատութեան կարօ-
տով այրուած հոյի աչքերը
չէին կարող հետևել նրանց:

Հազիւ Միութիւնը խղուած և
գեռ նրա վերահաստատման մա-
սին յայտնեց տակաւին իսպառ-
չանգած՝ երբ Միութեան գաղու-
անձկութեամբ սպասող Հայաս-
տանցու ներկայութեան հարց է
տրուում նրանց ներկայացուցչին
թէ արդեօք կարելի չէ՞ յեղա-
փոխական բոլոր ոյժերի միու-
թիւնը իրագործել յանուն Հա-
յրենիքի փրկութեան, Հին Հնչ-
ակեան ներկայացուցչին (Հրա-
հատ—կամար) խուսափում է
պատասխանելուց, թաքնուած
անճարակ իմաստակութիւնների
ետեւը:

Այս և այս կարգի իրողութիւն-
ներ, չէին կարող նպաստաւոր
գաղափար թողնել մեր և մեզ
հետ, կարծում ենք, բոլոր հայ
ժողովրդին վերայ: Այդ իրողու-
թիւնները կարող էին կարծել
տալ միայն որ Հին Հնչակեան
կուսակցութիւնը ոչ մի ձգտում,
ոչ մի հակում, ոչ մի տրամադ-
րութիւն չունէր դէպի յեղափո-
խական ոյժերի միութիւնը, այլ
որ նա յամառաբար պետք է պահ-
պանէր, ամեն գնով, իւր կու-
սակցական ուրոյն շարքերը,
ուրոյն գործունէութեան հղանա-
կը և անմիաբանութեան գործոն-
ներից մէկը դառնար ստրուկ,
հալածուած և ցիրուցան հայու-
թեան ազատագրութեան Գոր-
ծին շուրջը:

Այնու ամեն—յիս, իրենք ոչ
ժը աւելի մեծ է քան մեզանից
մէկի կամ միւսի մասնաւոր,
անհատական տրամադրութիւն-
ները, հակումները, քմահաճոյք-
ները, որոնք ուշ կամ կանուխ
տեղի կտան՝ եթէ կղզացուի և
կըմբռնուի վերջապէս որ անկա-
րելի է, առանց պատժուելու,
դէմ գնալ ահագին անհրաժեշտ
պահանջներին՝ ազգային գոյու-

թեան կուսակցութեան, որպիսիներից
է—ազատ Ազգը՝ ազատ Հայրենի-
քով: Այդ կը լինէր խիստին դէմ
յիւսարարար արացել:

Այդ առաջին անհրաժեշտու-
թիւնը—Հայրենիքի փրկութիւնը
օսմանեան ճշմարտական թիւց—
հարկաւոր է իրագործել մե՛ն
գնով և ամենից առաջ:

Այդ անհրաժեշտութեան իրա-
գործումը կարելի է թոււալ,
յեղափոխութեան ներկայ իրենք
գրութեան մէջ, միայն և մի
միայն բոլոր ուրոյն և անշա-
տաբար գործող կուսակցութիւն-
ների միութեամբ, համակեդրո-
նացումով: Ուրիշ կերպ անկա-
րելի է տեսնել և չէ տեսնուում
Հայրենիքի փրկութեան գործի
յաջողութեամբ գլուխ բերուիլը:
Միակ ելքը այդ է, ընդհանուր
միութիւնն է:

Ահա այս անհրաժեշտութիւնն
է որ իւրերկրպիտ հսկայ ծանրու-
թեամբ կախ ընկած Հին Հնչակ-
եանների միջնորդողի շատ բարձ-
րերում ձախող օգտապարկից,
քաշում է նրան դէպի ցած,
դէպի երկիր: Եւ մենք տեսնում
ենք որ նրանք պախ են, նը-
րանք հետզհետէ ցածրանում են
այդ անմատչելի բարձրութիւն-
ներից, ուր երկար չէին կարող
նրանք միմեկի մնալ, առանց սա-
ռելու կամ շնչադգելութեան
մասնաւորութիւն:

Ուրիշ տեսակ չէ՞ր էլ կարող
լինել: Ուրիշ տեսակ մենք չէինք
էլ նախատեսած իր ժամանակին:
Քաշուիլ առանձնանալ, փախ-
չիլ ընդհանուր կեանքից՝ անկա-
րելի է, երբ գործունէութեան
հոյը ընդհանուր է և մէկ, եւ
ուր կարելի է փախչիլ: Չէ՞ որ
վերջի վերջոյ պէտք կլինի գալ
այդ ընդհանուր հոյի վերայ, Չէ՞
որ անհրաժեշտ է ոտքի կուս-
ունենալ կանգնելու համար:

Մենք չենք ուզում, առ ալ-
ժը, վերլուծել նրանց պաշտօ-
նական և կիսապաշտօնական օր-
գաններում վերջին ժամանակե-
րումն պարզուած մտածումները
ընդհանրապէս հայ յեղափոխա-
կան կեանքի շուրջը: Այդ այն-

պէս էլ հեշտ, դիւրին գործ չէ,
տրուած լինելով այն սոսկալի
խառնաշփոթութիւնը, որ տի-
րում է այդ ըստ մեծի մասին
հակասական, անկապ, անկցորդ
և միմեանց մօտ ցիրուցան կե-
ցած մտքերի վերայ: Նրանց
պաշտօնական օրգանի մանաւանդ
նախադրվին համարը (Հին Հնչ-
ակ, թ. 2) մի տիպական
նմոյշ է այդ կողմից: Բացի
դրանից, մեր յօդուածի նեղ
սահմաններն էլ չեն ներք մեզ
ընդարձակուել այդ մասին Բայց
ինչ անմիջապէս վերաբերում է
մեր նիւթին, այդ այն է որ
այդ ահագին խառնաշփոթու-
թիւնից դատուած է և գուրազալիս
մի բաւական պարզ, բաւական
յոտակ գլխաւոր միտք: Այդ
հէնց այն է, ինչ մեր պրօպա-
գանդայի հիմնական է կազմում,
թիւրքաց Հայաստանի ազատու-
թեան շուրջը բոլոր յեղափոխա-
կան ոյժերի միութիւնը մէկ
և ընդհանուր ուղղութեան տակ:

«...Որոշ հոսանքի, համապա-
գործաւորութիւնների մէջ ընդ-
հանուր ուղղութեան արեւի մէջ
ամփոփել յեղափոխական գոր-
ծունէութիւնը թիւրքալում»
ինչո՞ւ միայն թիւրքալում և
ոչ նաեւ նրանից դուրս բոլոր
վայրերում:

Այդ խօսքերն ենք մենք գրու-
նում «Հին Հնչակի» ամենապեր-
ջին համարի (թ. 3) խմբագրա-
կանում:

Շատ լաւ:

Բայց այդ ի՞նչ ասել է: Այդ
չէ՞ նշանակում որ Հին Հնչակեան-
ները իրենք էլ գտնում են որ
անհրաժեշտ է, և ուրիշ կերպ
չէ էլ կարելի մտածել, միացը-
նել բոլոր յեղափոխական ոյժերը
և գնել նրանց գործունէութեան
միեւնոյն ուղղութեան տակ: Այդ
պարզապէս միութեան տեսու-
թիւնն է, միութեան գաղափա-
րըն է:

Միայն, մենք չենք հասկա-
նում լաւ թէ ինչ են նշանակում
Հին Հնչակեան պաշտօնական օր-
գանի այն միւս խօսքերը, վերա-
բերմամբ ապստամբական գործին,

Թէ «այդպիսի պրակտիկական գործունէութեան գործադրութեան դերը ընկնում է Հնչակեան (հին) կուսակցութեան թիւը քան Հայաստանի կազմակերպութեան վերայ» Լաւ : Հապա Նոր Հնչակեանները : Հապա Հ. Յ. Միութիւնը : Դրանց դերը ի՞նչ է լինելու :

Մենք կարծում ենք որ անմիտ է , աննպատակ է և փառասկար որ կուսակցութիւնները իրենք իրենց ինչ որ բացառիկ դերեր ընծայեն այն գործի հանդէպ , որի համար նրանք բոլորն էլ ունին միեւնոյն կոչումը : այն է՝ թուրքաց հայատանի ազատութիւնը թրքական լծից , որի իրագործման համար , ընդունելուց յետոյ որպէս անհրաժեշտ պայման բոլոր յեղափոխական ոյժերի միացած եւ մի ուղղութեամբ գործելը , նրանցից ամեն մէկին ուրիշ բան չէ մնում , բայց եթէ կամք ունենար զիջողութիւններ յանձն առնել՝ իրագործելու նախ և առաջ այդ անհրաժեշտ համարուած ընդհանուր Միութեան պայմանը :

Թէ որքան համապատասխան կլինին Հին Հնչակեանների գործնական քայլերը իրենց այդ համոզման հետ , այդ ցայց կտայ մօտիկ ապագան : Մենք նրան կհետեւինք , ինչպէս հետևում ենք բոլոր կուսակցութիւնների քայլերին : Ան այժմ կլինինք վերապահ , ուրախութեամբ արձանագրելով փաստը , այն է որ , Հ. Յ. Միութիւնից և նոր Հնչակեան կուսակցութիւնից յետոյ , Հին Հնչակեանները գալիս են շարունակել իրենց միջոցառումները հասկացողութիւններով ու ձգտումներով՝ հայ ժողովրդի ազատագրութեան գծուարին գործի շուրջը :

Պէտք է յուսալ : պէտք է հաւատալ որ միութեանական այդ ձգտումները վերջ ի վերջոյ կը դառնան անխտիր բոլոր յեղափոխական ամեն տեսակ գոյներին համար ընդհանրական , վերածուելով և խառնալով թանձր , չօչափելի իրողութեան մէջ , ուղում ենք ասել ընդհանուր Միութեան մէջ , որպէս իրերի տրամաբանական և անհրաժեշտ հետևանք :

Հնչակեան Խոշորագոյն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սօֆիայի սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյ համար Բահանայի մը պէտքը զգալի լինելով , կը խնդրուի որ փափաքող Արժան . Հարք բարեհաճին իմացնել :

Ի Դիմաց Արժանապահայ Թաղ . Խորհրդոյ

Ատենապետ	Ատենապետ
Պ. Նրկանեան	Ս. Մինասեան
904 28 Ապրիլ	
Սօֆիա	

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Մ Ա Խ Է Ն

18 Ապրիլ 1904

Ամբողջ աշխարհ լաւ գիտէ , թէ պաւստոսեան բոլոր ժողովուրդը ընդհանուր թշուառութեան մասին ոչ թաւանդեալ է ի վեր ութ տարիներ անցան . իրաց նոյն վիճակը այսօր ալ կը շարունակուի : Հիմակ որ ժողովուրդը հազիւ իր օրապահիկը կրնայ չահիլ , ահա ուրիշ բարբարոսութեան ներթափառու է . Պոստապի Լազերուց կողմէ տառապանք կը կրէ : Աստիք , չարագործներու ցեղը մը , որ ծխախոտի մաքսով նկատ լինէ , լաւու թեմաբ կամախի գիւղերը կը մտնեն և սպառնալիքի տակ խեղճ գիւղացւոց կը ձգեն ծխախոտի բեռները և դրամ կը պահանջեն :

Այս տեսակ դէպք մը պատահեցաւ Կամախի Բաղարիճ գիւղին մէջ : Սուրբ մը Լազեր այս գիւղը կը մտնեն և իրենց բերած ծխախոտերը գիւղացւոց ձգելէ յետոյ . ասոնցմէ փոխարէքը կ'պահանջեն . խեղճ գիւղացիք կաղաչեն , բայց վայրագ Լազերը ականջ չը տալով կը պոռան և կը սկսեն ձերբ դրամ ունենալը կամ չունենալը մեզ համար միեւնոյն է դուք ծախելու էք ձեր ունեցածները և մեզ դրամ տալու էք ոչպէս կը կրնանք : Գիւղացիք կը պատասխանեն : « Եթէ նոյն իսկ այս անգամ ձեզ վճարուի , երկու օր յետոյ կրկին հոս պիտի գտնուիք , և ինչպէս պիտի վճարենք դուք մեզ արդէն չառ ծխախոտ ծախած էիք : » Կատարել Լազերը տուններուն մէջ կը մտնեն , կուգեն գոյքերը գրաւել , երբ կենելով ընդգրկման , գանդի կը ծեծեն . Երէցեան Մանուկ աղայի կինը , որ 70 տարեկան է , չարաչար անգիտէ ծեծուած և կ'ստանա վիճակի մէջ թողուած է :

Գիւղացիք այլևս չկրնալով հանդուրժել այս վայրենութեանց . Կամախ քաղաքը կերթան և Երկու ոստիկանական պաշտօնէայ կը բերեն վտանգին առջևը առնելու համար . երբ պաշտօնէայ երբ գիւղ կը մտնեն , հոն գտնուած 20 Լազեր կը հեռանան գիւղէն դէպի հեռաւորող մը : պաշտօնէայները կը պոռան Լազերսն « Կառավարութիւնը ձեզ կարգիլէ փոխառած ծախիլ : » Լազերը կը պատասխանեն : « Ձեր կառավարութեան հրամանը մեզի համար արժէք չունի . մեր կիները մեզ կարծեն հրացան ի ձեռքին մեր շատորեայ պիտոյքը ճարել : » Անգամ մը նկատողութեան առէք սա , թէ Լազերու կինները աւելի աղքատացուած են ունին քան Սուրբան Համար :

Երբ Լազերը գիւղը կը ձգեն , ոստիկան պաշտօնէայները որ եկած էին գիւղացիները պաշտպանելու համար , ասոնցմէ կը պահանջեն յոգնութեան վարձը ըսելով . « Մենք ձեզի համար քաղաքէն մինչև հոս եկած ենք , պէտք է որ դուք մեզ վճարէք մեր յոգնութեան փոխարէն 150 դրուց : » Ինչ կրնային ընել թշուառ գիւղացիք յուսահատած , ստիպուեցան վրձարել : Ասոնց մեկնուին քաղաքը ժամ յետոյ , սասնելու Լազերէ բաղկացեալ խումբ մը գիւղը կը հասնի : Գիւղացիներէն երկու մ. րդ , մէկը Հայ և միւսը Թիւրք , կերթան Լազերը կը գտնեն և ասոնց կը ծեծեն : Կրկին կուգաք բռնութիւն գործելու և պարտաւորեցնելու ամէն մարդ ձեր ծխախոտ ընելու : » « Այո , կը պատասխանեն Լազերը , պէտք է որ ամէն մարդ դնէ : » Թիւրքը , Հիւսնի , կը հակառակի , և չարաչար կը ծեծուի :

Լազերէն :

Իրիկունը գիւղացիք խորհրդակցութեան կը հաւաքուին : « Մեր համարեութիւնը այլևս սահման չունի , պէտք է դիմագրութեան միջոցներուն վրայ մտածել , զարնել և զարնուիլ : » Հետեւեալ առաւօտ , բոլոր ժողովուրդը կ'եկեղեցի կերթայ . վայրենի Լազերը կ'եկեղեցի կը մտնեն և Տէր Ստեփանը ու գիւղին երկու երեսները բռնում թեմաբ դուրս հանելէ վերջ , զանոնք կ'ստիպեն իրենց ծխախոտը գնելու : Այս միջոցիս կ'եկեղեցւոյ աւարտողութիւնը կը խանդալուի , բոլոր ժողովուրդը , երկուստաբար , ձեր , աղայ և աղջիկ ոտքի վրայ են և կը սկսին կ'եկեղեցւոյ զանազանները հնչեցնել . կը սպառնան Լազերուն և կը պոռան անոնց . « Կամ պէտք է գիւղէն դուրս ելլէք և կամ կայրուիք , ա'լ այսչափը կը բաւէ որ մենք ձեզմէ տանջուեցանք : » Լազերը կը ձգտին իրենց զէնքին դիմել , բայց չեն կրնար , և կը խնդրեն որ իրենց ազատ ճամբայ տրուի որ երթան և վրանին յարձակում չընեն , սակայն մեր պահովութեան համար , կը քան անոնք , պէտք է որ քահանան և գիւղացիները մեզ ըլկին : անոնք գիւղէն մինչև քաղաքը ժամ հեռաւորութեամբ : Քահանան քիչ մը անոնց ընկերակցելու յետոյ , ձգտելու որ Լազերուն հետ մնացած էր . գիւղէն անգամ մը հեռանալէ յետոյ , անոնցմէ կը կ'պարտին ոճրագործի մը պէս և կը տանին երկու ժամ հեռաւորութեամբ « Մեծ խաչ » ըսուած տեղը . հոն անոր ժամացոյցը կ'առնեն ու քարի տակ գնելով կը կոտորեն և զանի սաստիկ ծեծելէ յետոյ ևս կը գրկեն :

Ահա այս է մեր ներկայ վիճակը և այսպէս են մեր կառավարութեան արդար օրէնքները :

(Իրօ-Արմէնիա)

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Նախորդ . Թ . Շար .

7. — Ըսուեցաւ նաեւ որ Հայերը պատճառ մը չունին զանգատելու նոր օրէնքէն , որ անոնց անվթար կը ձգէ սեփականութեան իրաւունքը , և իրենց ստացուածներուն հատկէն գուժար մը կը յատկացունէ անոնց գործածութեան համար , մինչ Պետութիւնը միմիայն յանձնադրելի գեր կը կ'ստարէ յօգուտ բուն իսկ հայ կրօնական հաստատութիւններուն : Իրօք , Յունիսի 12 ի օրէնքին մէջ միջանկեալ պարտութիւն մը կը կըսէ , որ հայ Եկեղեցիներ սեփականութեան իրաւունքը չեն կը պահուին , բայց անօգուտ է փնտռել թէ յօգուածի մը մէջ մըտցուած քանի մը բաւեր կընան իրրէն կանաւ արամադրութիւն մը նկատուիլ , և թէ անոնք Հայերը առժամ պէտք իստակ չեն ծառայել :

Ենթադրելով որ այս վերապահումը անկեղծ ըլլայ , պէտք է տ'անել թէ այս սեփականատիրութեան իրաւունքը ինչ արժէք ունի , և սեփականատիրոջ կուտայ իրապէս իր ստացուածքին տէր ըլլալու , զայն տնօրէնելու , անոր չահագործումին պարտպելու և անոր հատկութիւնը վայելելու իրաւունքը :

Ներկայ պարագային մէջ հայ Եկեղեցին իր գոյքերը չկրնար այլևս նկատել իբր իր ստացուածքը , քանի որ չկրնար անոնց մատակարարութեամբ պարտապիլ , հակառակ եղանակը որով անոնք կը ստանաւին , և ոչ ալ վերապէս , գործածիլ զանոնք , քննադէս ինք կը կ'ստան : Վարկածատես և տեսական իրաւունք մը չոր և անհիմն քաջատրուութիւն մը առանց գործնական արժէքի և իրական աղբյուրութեան՝ ահա ինչ որ կը մտայ հայ Եկեղեցիին . քանի որ անկէ կը խլուի իր ինչքերը անտեսելու իրաւունքը : Ուրիշն իմէ Լուգուի իրականութեանէ հեռաւոր և իրերը գնահատելով այնպէս ինչպէս որ են , պէտք չէ Հայերը մեզ զայրել իրողութեամբ հաճ , եթէ Յունիսի 12 ի օրէնքը համապարկ չի կատարել իրենց սեփականատիր իրաւունքին քննադէս և իրենց Եկեղեցիին , անոր դոյքերուն ու ստացուածքներուն յափշտակութեամբ :

8. — Բայց գիտել կը տրուի , թէ ձեռնհաս իշխանութիւններ իրաւունք ունին ինչ ինչ սեփականութիւններու վրայ խնամակալութիւն կարգելու , այսինքն անտեսութիւնը զատելու սեփականութեան , և անաջինը յանձնելու ոչ թէ սեփականատիրոջ այլ անկէ տարբեր անձերու : Բայց իշխանութիւնը երբ այն ատեն միայն խնամակալութիւն կը հաստատեն երբ սեփականատէրերու անկարողութիւնը ապացուցուած է ըստ օրինի և ըստ իրականի :

Ըստ օրինի , խնամակալութեան կ'ենթարկուի անչափահաս մը , խեղաքար մը կամ ոճրագործ մը . ըստ իրականի , պէտք է որ այս պարագաւ ելին մէկը ապացուցուի իրապէս և օրինական կերպով : Հայ Եկեղեցիին պարագան չկրնար ինչպիսիս Երեք վարկածներէն և ոչ մէկին տակ :

Ներկայ , խնամակալութիւնը առժամանակեայ է և պէտք է ըլլայ , նոյն իսկ իր գնութեամբ . այսինքն ցորչափ տեւեն պարագան և պատճառը խնամակալութիւնը պէտք է դադրի , երբ պատճառը այլևս չկայ , զի մըտցունելու և խնամակալութիւն մը չկրնար ըմբռնուիլ :

Յունիսի 12 ի օրէնքը կ'ենթադրէ իրիւր վիճակ մը , որ երեսոյթն ունի խնամակալութեան , առանց սակայն այս վերջինին պայմաններուն համապատասխանելու , քանի որ կ'եկեղեցական իշխանութիւնը ընդ միշտ զրկուած է ստանալու իրաւունքը : Սրկ ինչպէս որ անտեսութիւն իրաւունքին առժամանակեայ լարձումը կը համապատասխանէ սեփականութեան իրաւունքին առժամանակ զաղարու մին կամ բարձու մին , նոյնպէս ալ անտեսութիւն իրաւունքին մշտնջենական բարձումը պէտք է իրր համապարկ նկատուի սեփականութեան իրաւունքի մշտնջենաւոր բարձումին : Կամ ուրիշ բաւերով , անպայման յափշտակութեան : Յունիսի 12 ի նորոգ կարգադրութեան հ' գրեականները իրօք այս արգիւնէն կուգէն յանգիլ , բայց կամ այն է որ թերեւս քաջութիւնը չուենեցան ուսու կայսերական կառավարութիւնը պաշտօնապէս յափշտակելով , անպայման քրիստոնեայ Եկեղեցիին մը նկատմամբ , և կամ թէ սեփականատիրութեան իրական բարձումը բարձրագոյն հաւանութեան չարժանացաւ կառավարութիւնը ուղեղ լանը թողած ինչ միջանկեալ պարտութեամբ մը , որ սակայն չկրնար դիմադրուիլ սեղմ պատճառաբանութեան մը զօրութեամբ , և վերջապէս իրականութեանը ակն յայտնի կերպով :

Շարտաւանկի

ՆԱԿԱԿ ԽԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի յարգանս աղօթող և յազնա-
վաստի Պատ. Առնակալին, իր այս
կարճ պատգամներն են և՛ քերթի
մեջ ընդունելով, խոստովանելով
կրօնական այս խնդիրը:

... Խմբագիր

Դուք Ձեր թերթի անունը դրե-
ք «Իրաւունք»։ Իրաւունք ազգային
հայ թերթ մը չը կրնար խոյս տալ
այն խնդիրներէն, որ կը վերաբերի
ազգային եկեղեցւոյն։ Որովհետեւ
հայութեան հիմքն այսօր եկեղեցին
է (1)։ Իմ շնչալիւս հրօսական
վարդապետութեան վերաբերեալ խնդիր
չէր երբէք։ Ձեր «Իրաւունք»-ով դուք
իրաւամբ կը հարուածէք այս ու այն
աւելարդ հոգեւորականը, եւ եթէ
իրաւասէր էք, որ կը կարծենք թէ
էք, պէտք է ոչ միայն անհասկնալ
թերթի թիւերը պարտաւէր ալ պէտք է
զոյցիլ եւ այն աղբիւրները, որոնցմէ
կը ըղիւծի չարութիւն ազատիչութիւնը
ինչպէս է անբնական կուսակա-
նութիւն ըստածը։

Դուք, մեծ. խմբագրապետ, կըսէք
թէ առաքելաւոր ամուրիութիւնը կը
զօղէ։ Ընթերցող է այդ։ Բայց եւ ձեզ
ցուցուցի որ Ս. Պօղոսի այդ յանձնա-
րարած բարբառն այն ժամանակի հալա-
ծանաց համար էր, որ քրիստոնէայի
չարազանց փորձութեան չ'ենթարկուին
իրենց հաւատքը ուրանալու այն ա-
տենուայ ընտանեկան դժուարութեանց
պատճառաւ։ (2) (տե՛ս թիւ 1, է. 26)

[1] Եթէ կընդունէք թէ հայու-
թեան հիմքը Լուսաւորչ. լազգ. եկեղե-
ցին է, ուրեմն դուք եւ այն բոլոր
հայերը որ այդ եկեղեցիէն կը հեռա-
նան անոր հիմք ստորած կըլլան։
Եթէ եկեղեցական չէ՛ք, մէջ թերթու-
թիւններ կը տեսնուին, հարկ է զա-
նոնք վերցնել ջանալ այդ չէ՛ք, մէջ
մնալով, եւ ոչ թէ անկէ դուրս ելի-
նով տկարացիլ ազգ. գոյութեան
այդ հիմքը։

[2] Հայ եկեղեցականութիւնը սկիզ-
բէն մինչեւ այսօր հալածանքէ ազատ
մնացած չ'է։ Ահա այսօր իսկ մեր հ-
պիսկոպոստներուն եւ վարդապետնե-
րուն մեծ մասը աքսորուած ու
տարագրուած է իրենց գաւառներէն։
Անոնք լիք ընտանիք ունենային ինչ
աստիճան թշուառ պիտի ըլլային,
բացառել աւելորդ է։ Դիտ. իմք.

Սուրբ գիրքը, ոչ չին ոչ Նոր կտակա-
րանի մէջ կուսակրօնութիւն ըստած
զարտոգորութիւնը չը քարոզէր (3)։ Ա-
ռաքելաւոր բոլորն ալ ամուսնացած
էին բացի Պօղոս Առաքելաւէն։ Գրի-
գոր Լուսաւորչէն ալ ամուսնացած էր
եւ իր հայրապետ Բարսիլէն ալ (4)։
Սակայն դուք, որ այս շատ կարեւոր
ազգային խնդրոյն վայ խօսիլ ու լը-
սել չէք ուղեր, ձգենք։ Միայն սա
ըսինք, որ մեր բողոքական հայերու
ազգային եկեղեցւոյ ծոցէն հ'առնալու
զլիսաւոր պատճառներէն մին կախկո-
պտանքը, տեղապահները, փոխա-
նորդները, վարդապետները եւ նոյն
իսկ պատրիարքները եւ կ' թողիկոս-
ները չ'ամուսնացած ըլլալն է։ Նո-
րանք, ճշմարիտ է, ուրիշ կընեն։ Եւ
որովհետեւ անարատ կեանք վարեն։
Բայց ով ո՞ր էջմարտին, երուսաղէմ
եւ ուրիշ վանքեր տեսած է եւ ցած
ու բարձր կուսակրօններ եւ անոնց
«փոքրաւորներն» ալ «պատաւոր ման-
չիւր» կը ճանչնայ, անկարելի է որ
մեզ բողոքականներս պատարակէ
ձեզ պէս կամ մեր իրաւացի բողոքը
ըսել չը կամենայ (5)։ Պապական եկե-
ղեցին մի խոշոր սխալ ըրած է, իսկ
հայ-լուսաւորչական եկեղեցին կէս
սխալը կընէ, եւ սխալը կը մնայ
սխալ։ Հեռացրէք սխալները, ու միա-
նանք։

Բողոքական քարոզիչ

Ա. Ամիրխանեանց

(3) Իրկնի հարկ չէր. անգամ մը
ցոյց տուինք թէ Պօղոս Ձեր ըմբռնա-
ծէն տարբեր, այսինքն, «ամուրիու-
թիւնը աւելի աղէկ է» ըսած է (Կորնթ. 7, 1-5)։

(4) Բայց իրենց կիները կամ մե-
ռած էին եւ կամ իսպառ դատ կապ-
րէին անհոգի, մայրապետա-
նոց զրկուելով։

(5) Եթէ դուք ալ Զմիւռնիոյ ֆէր-
քէներու եւ ուրիշ քանի քանի բո-
ղոքական երէցներու գործած պղծու-
թիւնները յիշել հաճեք, չ'պիտի ծա-
րանաք մեր ամուրի եկեղեցականներէ
ոմանց ուխտազանցութեան վրայ, որ
անկեղծ հայու մը «ազգ. գոյու-
թեան հիմքէն» բաժնուիլը չէ կարող
արդարացի ընալ։

Դիտ. իմք.

ՎԱՌՆԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Աղքատախնամ ընկերութեան ընդ.
Ժողովոյ Դիւանա ներկայիւս կողմ
յայտարարելով ընկերութեան ընդ-
հանուր ժողովը պիտի գումարուի
յառաջիկայ կիրակի 2 Մայիս, ժամը
10 ին Ազգ. Վարժարանի սրահին մէջ։

Օրակարգ

Ա. Վաւերացումն նախորդ նիստի
ատենադրութեան։

Բ. Համարատուութիւն Տնօրէն
խորհրդոյ

Գ. Ստացարկներ

Դ. Հրաժարական Տնօրէն խորհրդոյ
Ե. Նոր ընտրութիւն, եթէ հարկ
կատուի։

Բաղձալիէ որ այս երկրորդ հրաւե-
րին գործնականապէս պատասխանեն
ընկերութեան յոյս անգամները կամ
դէ՞մ մեծամասնութիւնը։ Հսկողակ
պարագային, կանոնադրութեան 12
յօդուածին համեմատ, քանի անգամ-
ներ որ ներկայ լինին, օրինական հա-
մարեւով նիստը պիտի բացուի։

Դիւան Ընդհ. Ժողովոյ Աղքատ.

Ատենադպիր Ատենապետ

Յ. Գումարութեան Ե. Սէմբեան

21 ապրիլ 901

Վառնա

ԱԶԳԱՅԻՆ

Կիլիկիոյ — Վերականգնել ձեռ-
նակեան. կուսակցութեան օրկան
Հնչակ թերթին վերջին թիւին
մէջ հրատարակուած թղթակ-
ցութիւններէ կը տեղեկանանք
թէ՝ Զէյթունի եւ Հոճընի յոյն
զայաւազամներու օգնական թուր-
քերը բռն գաղութացման են
գերակշիռ գիրք եւազդեցութիւն
կը վայելեն։ Զէյթունի ազնու-
տաւրութիւնէն ի վեր 7 տարի
տուրք չէր առնուած. սակայն
հիմա ամենախիստ միջոցներով
այդ տուրքերը կը գանձուին եւ-
զեր։ Միւս կողմէ Զէյթունի

չրճակայ Հայ գիւղերը Ձերքէզ-
ներէ եւ Կրէտէն գաղթող թուր-
քերէ ոչ նուազ կը նեղուին. որով-
հետեւ այս վերջինները թուրք
կառավարութեան բացարձակ
պաշտպանութիւնը կը վայելեն
ընդ-դէմ Հայերու։ Ասոնց բո-
լոր արտերը եւ ազարակները
կը գրաւուին Կրետացիներէ.
Հայերու բողոքին վրայ Ատա-
նայի կուսակալը սա պատասխա-
նը տուած է. «Ինչ ըսել կուզէք,
խընդրը կեպուներն, այս իս-
լամները մեր զաւակներն են,
երկիրը մերն է, ասոնք Կրէտէն
հոս գաղթած են, ասկից ալ ու-
րիշ տեղ երթալու են»...
Կիլիկիոյ Տ. Սահակ Կաթողիկոսը
իր շուրջ անձնուէր ու կարող
կրօնական աշակիցներ չունենա-
լով, զգալի օգուտ մը չէ բերած
Վիճակին նայնը կը հաստատեն
Պօլսոյ թերթիւր. հետեւաբար
անձնուէր եկեղեցականներու
պէտք կայ այդ կողմերը։
Այսպաշի մօտ գաղթական թուր-
քեր երկու հայ երիտասարդներ
մեռցուցեր են. այս դէպքը մեծ
յուզում յառաջ բերել է շրջակայ
հայերու մէջ. կառավարութիւնը
զինուորներ ղրկել է դէպքին
վայրը յանցաւորները պատժելու.
վախնալով որ ժողովուրդը կը
խլրտի։
Ատանայի նահանգի Ապօղլի
գիւղէն հայ այրի կին մը Ապ-
տուլ եւ Իսմայիլ աչա անուն
թուրքերէն կառեւարդուի գիշերը
ու կը բռնաբարուի. կիներ կաթո-
ղիկոսին կը գիւժէ եւ խնդրող ազ-
գովին ձեռք կառնուի, բայց
չեն յաջողիր ստորագործները
բանտարկել տալ։ Յետոյ նոյն կի-
նը իտալիոյ եւ Անգլիոյ հիւպատոս-
ներուն կը գիւժէ ու հաղիւ կը

ՄԻՔԱՏՕ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

(Որուանկար)

«Եթէ, ինչպէ՛ս համոզուած եմ, եղբոր մը պէս
կը սիրես զիս, ամենէ՛ն աւելի բողոքացի՛ր սա պոռ-
նիկ կնկան մը ժպիտն ու լիզա՛ն. նեցող Անգլիայէն։
Անիկա գազաններու մէջ ծպտեալ կը չըլի ու ազ-
ուէսի մը խորամանկութեամբ ինչ կընէ, ինչ չընէ՛ր,
կառաւարդութեան քեզ ա՛յն ահաւոր տնտեսներն եղբն,
ուր կապանն միւս գաղանները։ Ես չ'ա՛տ խաբ-
ուած ու չ'ա՛տ զղջացած եմ, հետեւաբար խորհուրդ
կուտամ՝ որ աշակերտ զանուիր ու անոր խաբէա-
կան թելադրութեանց չը հետեւիս։ Միեւնոյն
բանը կրնամ ըսել ձերկօններու համար։ Անոնք ալ
միեւնոյն խմորը, միեւնոյն միսը, արեւնի, ոսկորի
ու ջիղի դանդուածն են ու Աստուծոյ անուան
տակ ծածկուած են։

«Կը մնան Դիւմանիա, Ֆրանսա, Իգալիա ու
Աւստրիա... ասոնք նշանակութիւն չ'ունին.
միայն՝ եթէ ինկած գիւղի մը գտնեն, շուկա ու պէս
պատառ մը կը բրբռեն ու կը փախչին։

«Խօսքս կը դարձունեմ քու բռն թշնամիք՝
Ռուսիային վրայ։

«Օ՛հ, սոսկալի՛ մէկն է... հասցէ ու չ'օտոնաս
... կատաղի արջի մը թաթերով զինուած է ու
ննտած տեղը խորունկ անգունդ մը կը բանայ։

Ձա՛րկ, անոր ճիրաններուն, անոր մագիլներուն,
անոր անաւոր թաթերուն զարկ... բայց միշտ
հեռուէն։

Ձիւնա՛ս... չը սահի՛ս... Ան ատեն անողոր է,
անգուլ է, անագորոյն է իր բոլոր յօշոտութիւններուն
մէջ։

«Դարէ մ'ի վերէ որ կայսրութիւնս կը ըզբաէ եւ
դեռ՝ չը կշտացաւ... երեւակայէ, այն գիտնեցող
պատանները կրնային անդունդ մը լեցանել...
բայց չը լեցուցին անոր փորը։

«Կայսր եղբայր ի՛մ, համանման ճակատագրի մը
զոհ չ'եղիմա... այն է իմ բաղձանքս։ Հարուածէ՛,
միշտ հարուածէ՛ ու ետ քաշուի՛ր. Բու հարուած-
ները այդ անօրէն գազանի սրտին մէջ մէկմէկ ժա-
նդուած երկվթի կտորներու պէս թո՛ղ միտուին, որ
ես միսթաթուիմ։

«Ա՛խ, ես ալ ունիմ փոթորիկներ, որոնք Մակե-
դոնիոյ ու Հայաստանի լեռներէն կը փչեն։ Տեսնե՛ք
... այդ թշնամիք խաղերը զլիւսու ինչի՛ր պիտի
բերեն։ Նամակը գրած պահուս՝ իմացայ որ այդ
փոթորիկներն արդէն ծայր տուած էին ու արեւմտ
գաշար տարածուած կայսրութեանս ամեն անկիւն-
ներու մէջ։ Եւ գիտցի՛ր որ այդ կեպուր-Մօս-
թօթի թելադրութեամբ է...

«Ներէ... որոշած էի գաղտնաբար աջակցիլ
քեզի. սակայն չը յաջողեցայ։ Մինչեւ վաղեմի թըշ-

նամիս պատերազմական նաւերը պալատիս առջեւէն
սնցուցի... Ասիկա ծանր եկաւ ինձի բարկու-
թիւնէս՝ երկու օր հիւանդ եղայ։

«Ի՞նչ կրնամ ընել... ձեռքերս, ոտքերս ու
ամբողջ մարմնս կաշկանգուած են, ու ես կը նը-
մանիս գառադիղի մը մէջ պրկուած առիւ-
ծի մը։

«Կազմեմ առ Ամենաբարձեան Աստուած
Աստուածոց որ կար եւ կարողութիւն պար-
գեւէ քու՛մ ամենազօր բանակիդ եւ անկցի՛
բռնաւորն...»

Աստուածաշուք Կայսր Թուրքիոյ եւ
Սրբազան յաջորդն Մուհամմէտի՛
Սուլթան Ապտուլ-Համիտ։

(Ուրուական)

Գրուեցաւ ի Պալատ
Երևոյդի
Կ. Պօլիս

(Շարունակելի)

